«Երևանի <<Գայի /Հայկ Բժշկյանց /անվան հ 129 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի
կոլեգիալ կառավարման խորհրդի

Արձանագրություն հ. 8

Նիստը գումարվել է 2022թ. մարտի 16-ին:

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 /ինը/ անդամներից 5-ը /հինգը/, բացակա 4-ը՝ Հակոբյան Սրբուհի ,Մելիքյան Սասուն, Մելքոնյան Աիդա , Ղազանչյան Ռուզաննա : Նիստին մասնակցում էին ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչ՝ Զինա Խաչատրյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության ներկայացուցիչ՝ Դորա Դումոյանը:

Օրակարգում՝

«Երևանի <<Գայի /Հայկ Բժշկյանց /ան վ ան հ 129 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի մրցույթ /ընտրություն/:

ԼՍԵՑԻՆ՝ Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Նաիրա Միքայելյանին ,որը զեկուցեց այն մասին , որ դպրոցի տնօրենի թափուրն տեղի համար հայտարարված մրցույթը չի կայանա , քանի որ խորհրդի նիստը իրավազոր չէ,հիմք՝ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության / նշանակման/ >> կարգի 25-րդ կետի,այն է՝<< Առանձին խորհրդի նիստը համարվում է իրավազոր , եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի երկու երրորդը>>:

Արդյունքում տնօրենի ընտրություն չկայացավ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության / նշանակման/ >> կարգի 27-րդ կետի 1-ին մասի՝<< Խորհրդի որոշմամբ մրցույթը հետաձգվում է մեկ անգամ և ոչ ավելի , քան 5 աշխատանքային օրով , եթե խորհրդի նիստը իրավազոր չէ>>: Խորհրդի նիստը որոշում կայացրեց հետաձգված մրցույթն անցկացնել 2022 թվականի մարտի 22—ին , ժամը 13:00-ին:

Նիստի նախագահ՝ Նաիրա Միքայելյան

Քարտուղար՝ Լիլիթ Հարությունյան